Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մ. Հ. ԱՆՏՈՆՅԱՆ

Հասարակական մտքի պատմության մեջ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը առաջինն էին, որ բացահայտեցին և գիտականորեն հիմնավորեցին հասարակության զարգացման օրինաչափությունները, մի ֆորմացիայից մյուսին և, հատկապես, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու օրինաչափություններ։ Ընդ որում, նրանք ղեկավարվում էին զարգացման դիալեկտիկական տեսությամբ, որի ստեղծողները հենց իրենք էին։ Վ. Ի. Լենինը շեշտում էր, որ պրոլետարական դիկտատուրայի անխուսափելիության մասին Մարքսի ուսմունքը հիմնված է զարգացման տեսության վրա, գիտության վրա։ Ըստ այդ տեսության սոցիալիզմը չի կարող անմիջապես ծագել կապիտալիստական հասարակությունից, վերջինս սոցիալիզմին անցնելու համար ստեղծում է միայն համապատասխան նյութական, քաղաքական և գաղափարական նախադրյալներ։ Հենց այս իմաստով է ասվում, որ սոցիալիզմը ծագում է կապիտալիզմից։

Մարքսը հասարակության զարգացումը դիտում է որպես բնապատմական պրոցես, հետազոտում է իրականում գոյություն ունեցող այդ պրոցեսի հակասությունները, ցույց է տալիս այդ հակասությունների զարգացման և լուծման տրամաբանությունը։

Վ. Ի. Լենինը իր «Պետություն և հեղափոխություն» հանճարեղ գրքում, խոսելով հասարակական կյանքի օրինաչափությունները ճիշտ ճանաչելու գործում դիալեկտիկական տեսության նշանակության մասին, գրել է. «Մարքսի ամբողջ տեսությունը զարգացման տեսության կիրառումն է արդի կապիտալիզմի վերաբերմամբ՝ այդ տեսության ամենահետևողական, ամենալիակատար, մտածված ու բովանդակությամբ հարուստ ձևով։ Բնական է, որ Մարքսի առաջ ծառացավ այդ տեսության կիրառման հարցը թե՛ կապիտալիզմի առաջիկա կրախի և թե՛ ապագա կոմունիզմի ապագա զարգացման վերաբերմամբ։

Իսկ ինչպիսի՞ տվյալների հիման վրա կարելի է առաջադրել ապագա կոմունիզմի ապագա զարգացման հարցը։

Այն հիման վրա, որ նա ծագում է կապիտալիզմից, պատմականորեն զարգանում է կապիտալիզմից, հետևանք է այնպիսի հասարակական ուժի գործողությունների, որը կապիտալիզմն է ծնել։ Մարքսի մոտ փորձի հետք անգամ չկա ուտոպիաներ հորինելու, դատարկ գուշակություններ անելու այնպիսի բաների մասին, ինչ որ չի կարելի գիտենալ։ Մարքսը դնում է կոմունիզմի հարցն այնպես, ինչպես բնագետը կդներ մի նոր, ասենք, բիոլոգիական տեսակի զարգացման հարցը, երբ մենք գիտենք, որ այն հենց այս կերպ է ծագել ու այսինչ որոշ ուղղությամբ է կերպարանափոխվում»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, հատ. 25, էջ 595։

Մարքսիստական դիալեկտիկայից, Մարքսի ուսմունքի ամբողջ էությունից բխում է, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցումը, լինի այն խաղաղ ճանապարհով, թե զինված ապստամբության միջոցով, չի կարող իրագործվել ինքնահոսի կարգով, տարերայնորեն։ Այդ անցումը կարող է կատարվել և իրոք կատարվում է միայն սոցիալիստական հեղափոխության միջոցով։ Ահա թե ինչու Լենինը ելնում էր այն բանից, որ միայն սոցիալիստական հեղափոխության ճանապարհին է հնարավոր մարդկության սոցիալ-տնտեսական և հոգեկան ազատագրումն ու բազմակողմանի առաջադիմությունը։ «Առաջընթաց զարգացումը,— եթե նկատի չառնենք հնարավոր, ժամանակավոր հետընթաց քայլերը,— իրագործելի է միայն դեպի սոցիալիստական հասարակություն, դեպի սոցիալիստական հեղափոխություն»[2]։ Մեկ այլ տեղ Լենինը շեշտում էր, որ «չի կարելի առաջ գնալ, առանց դեպի սոցիալիզմ գնալու»[3]։

Այս կապակցությամբ հարկ կա համառոտակի բնութագրել Լենինի ուսմունքը՝ մարդկային պատմության մեջ հեղափոխական դարաշրջանների դերի ու նշանակության մասին։ Նա ուսուցանում էր, որ հեղափոխական ժամանակաշրջաններում պատմական գործունեության մեջ են ընդգրկվում նորանոր ժողովրդական լայն զանգվածներ։ Այդ նոր դարաշրջաններում ոչ միայն քանդվում են հին կարգերի հիմքերը, այլև փոխվում է հին տեսությունը, որը մինչ այդ ծառայել էր հասարակության առաջընթացին, առաջ են քաշվում տեսական նոր դրույթներ, հարստանում ու զարգանում է հեղափոխության դիալեկտիկական տեսությունը։

Հասարակության նյութական և հոգևոր կյանքում տեղի ունեցող այդպիսի փոփոխությունների վճռական պատճառը աշխատավոր մասսաների հեղափոխական ստեղծագործությունն է, հարուստ փորձը։ Ահա թե ինչու Լենինը շեշտում էր, որ հեղափոխությունը ճնշված բազմամիլիոն դասակարգերի տոնն է, որ ժողովրդական մասսան երբեք այնպես հանդես չի գալիս որպես նոր կյանքի գիտակցական կերտող, ինչպես հեղափոխության ժամանակ։ Վ. Ի. Լենինը գրել է, որ «հատկապես հեղափոխական շրջաններն են աչքի ընկնում պատմական ստեղծագործության ավելի մեծ լայնությամբ... ավելի մեծ պլանաչափությամբ, ավելի մեծ սիստեմատիկությամբ, ավելի մեծ հանդգնությամբ ու պայծառությամբ, համեմատած քաղբենիական, կադետական, ռեֆորմիստական պրոգրեսի շրջանների հետ»[4]։

Պատահական չէ, որ մեր կուսակցությունը միշտ ղեկավարվում է Լենինյան այն դրույթով, որ կհաղթի և իշխանությունը իր ձեռքում կպահի միայն նա, ով հավատում է ժողովրդին, ով սուզվում է ժողովրդական կենդանի ստեղծագործության աղբյուրի մեջ և ղեկավարում նրա պայքարը։ Դրա լավագույն ապացույցներից մեկն է մեծ Հոկտեմբերը։

Ժողովրդական մասսաների պատմության մեջ չտեսնված սոցիալական գիտակցական ակտիվությունը Հոկտեմբերի օրերին պատահական չէր, այլ օրինաչափորեն պայմանավորված էր սոցիալիստական հեղափոխության արմատական առանձնահատկություններով։ Նախ, մարդկային ամբողջ պատմության ընթացքում առաջին անգամ միայն սոցիալիստական հեղափոխությա

2 Նույն տեղում, հատ. 22, էջ 425։
3 Նույն տեղում, հատ. 25, էջ 457։
4 Նույն տեղում, հատ. 10, էջ 312։

մեջ է, որ աշխատավոր մասսաները հանդես են գալիս որպես նոր, սոցիալիստական արտադրահարաբերությունների դիտակից արտահայտիչներ։

Անցյալում և ոչ մի սոցիալական հեղափոխություն իր առջև խնդիր չէր դնում ոչնչացնել արտադրամիջոցների մասնավոր սեփականությունը։ Այդպիսի խնդիր իր առջևն է դնում և լուծում է միայն սոցիալիստական հեղափոխությունը։ Հենց այդտեղ է երևում սոցիալիստական հեղափոխության խորությունը, հեղափոխություն, որն իր շուրջն է համախմբում աշխատավոր մասսաների լայն խավերին։ Գործնականում հաստատվեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի այն հանճարեղ կանխատեսությունը, որ պատմական գործողության հիմնալորության հետ միասին կհղորանա նաև աշխատավորական այն զանգվածը, որ պետք է կատարի այդ պատմական գործողությունը։ Վ. Ի. Լենինը շեշտում էր, որ այս խոսքերի մեջ արտահայտված է պատմական մատերիալիզմի ամենախոր և ամենակարևոր դրույթներից մեկը, որ պատմության իրական և իսկական կերտողը հեղափոխական ժողովուրդն է, աշխատավոր մասսաները։

Ի տարբերություն բուրժուական հեղափոխության, սոցիալիստական հեղափոխության առանձնահատկություններից մեկն այն է, որ նա բանվոր դասակարգի շուրջն է համախմբում բազմամիլիոն աշխատավոր մասսաների՝ սոցիալիզմ կառուցելու համար։ Այդ իմաստով Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային պատմության մեջ ամենախոր հեղաշրջումն է։ Հենց դա նշանակում է, որ սոցիալիստական հեղափոխության շնորհիվ նոր կյանքի կերտման համար պատմական ասպարեզ են դուրս գալիս ժողովրդական լայն զանգվածները։

Վ. Ի. Լենինը շեշտում էր, որ հենց 1917 թ. Հոկտեմբերից սկսվեց մարդկային պատմության մեջ մի նոր դարաշրջան, ժողովրդական մասսաների ինքնուրույն գիտակցական ստեղծագործության դարաշրջանը։ Հենց այդ էլ նկատի ունենալով, մարքսիզմի կլասիկները սոցիալիստական հեղափոխությունը իրավացիորեն բնութագրել են որպես նախապատմության վերջ և մարդկության իսկական պատմության սկիզբ։

Պատմական երկու դարաշրջանների սահմանագծում, իմպերիալիզմին անցնելու պայմաններում պատմական նոր փորձի, միջազգային բանվոր դասակարգի պայքարի և ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ուսումնասիրության հիման վրա Լենինը ստեղծագործաբար զարգացրեց ու հարստացրեց Մարքսի ուսմունքը, այդ թվում նաև սոցիալիստական հեղափոխության մարքսիստական տեսությունը։

Վ. Ի. Լենինը, ելնելով զարգացման դիալեկտիկա-մատերիալիստական տեսությունից, գիտական խոր վերլուծման ենթարկեց իմպերիալիզմը՝ որպես կապիտալիզմի վերջին փուլը։ Նա ցույց տվեց, որ իմպերիալիզմը կապիտալիզմի զարգացման մեծ բեկման էտապն է, սոցիալիստական հեղափոխության նախօրյակը։ Այդ կապակցությամբ Լենինը տալիս է իմպերիալիզմի եռակի բնութագրումը. 1) իմպերիալիզմը մոնոպոլիստական կապիտալիզմ է. 2) իմպերիալիզմը պարազիտական կամ նեխված կապիտալիզմ է. 3) իմպերիալիզմը մեռնող կապիտալիզմ է, սոցիալիստական հեղափոխության նախօրյակը։

Մոնոպոլիստական կապիտալիզմը, նրա զարգացումն ու կատարելագործումը արտադրության ըստ ամենայնի կենտրոնացումն ու համակենտրոնացումն է, նրա հանրայնացման աստիճանի բարձրացումը։ Այս հանգամանքը օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձնում կապիտալիստական արտադրու-

թյան հեղափոխական վերափոխումը սոցիալիստականով։ «Կապիտալիզմն իր իմպերիալիստական ստադիայում ընդհուպ հասցնում է արտադրության ամենից բազմակողմանի հանրայնացման, կապիտալիզմը կապիտալիստներին, այսպես ասած, հակառակ սրանց կամքի ու գիտակցության, ներս է քաշում ինչ-որ նոր հասարակարգի մեջ, որը կոնկուրենցիայի լիակատար ազատությունից դեպի լիակատար հանրայնացման հասնելու անցման հասարակարգ է»[5]։ Մոնոպոլիան, շեշտում է Լենինը, մի անցում է կապիտալիզմից դեպի ավելի բարձր հասարակարգ։

Այդ պայմաններն իրենց առանձնահատուկ զարգացումն են ստանում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի օրոր, երբ պետությունը անմիջապես միջամտում է կապիտալիստական վերարտադրության պրոցեսին՝ հօգուտ ֆինանսական օլիգարխիայի։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի և սոցիալիզմի միջև չկան միջանկյալ աստիճաններ։ Այդ կապակցությամբ Լենինը նկատում էր, որ այժմ սոցիալիզմը նայում է մեզ արդի կապիտալիզմի բոլոր պատուհաններից։

Վ. Ի. Լենինը քննադատում էր այն սխալ տեսակետը, ըստ որի հեղափոխություն կատարելու համար ամենահարմար պայմաններ են ստեղծվում հետամնաց երկրում։ Հետամնացության դոկտրինան մարքսիզմ-լենինիզմի հետ ոչ մի առնչություն չունի։ Խոսելով սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ նյութական պայմանների մասին, Լենինը շեշտում էր ոչ թե տվյալ երկրի հետամնացությունը, այլ այն, որ հեղափոխության համար հարկավոր է կապիտալիզմի զարգացման որոշ մինիմում, որոշ չափի զարգացած արդյունաբերություն, բանվոր դասակարգի և նրա կազմակերպությունների առկայություն և այլն։

Հետամնացության հակագիտական դոկտրինան շատ լայն տարածում է գտել մեր ժամանակ։ Բազմաթիվ բուրժուական սոցիոլոգներ անդրադառնում են այդ հարցին և յուրաքանչյուրը աշխատում է այդ հակագիտական դոկտրինան վերագրել Լենինին։ Ահա թե ինչ է գրում այդ առթիվ Ա. Մեյերը. «Լենինին և նրա կողմնակիցների մեծամասնությանը թվում էր, որ դասակարգային պայքարը ավելի ուժեղ կերպով է ծվատում հետամնաց երկրներին, քան թե երբևէ այդ տեղի է ունեցել կլասիկ բուրժուական պետություններում»[6]։

Նույն Մեյերը պարզապես զրպարտում է, երբ ձգտում է ապացուցել, որ իբր թե Լենինը հետամնացությունը համարել է հեղափոխության միակ պատճառը։

Սոցիալիստական հեղափոխության օրինաչափությունն ու անխուսափելիությունը հասկանալու համար կարևորագույն նշանակություն ունի կապիտալիզմի հիմնական հակասության հաշվի առնելը։ Այդ հակասությունը (ինչպես և մյուս հակասությունները) ընկած է կապիտալիզմի բուն հիմքում և նրա սրումը կապիտալիզմի կազմալուծման հիմնական պատճառն է։ Խոսքը արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր ձևի միջև եղած հակասության մասին է։

Սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսության կարևոր **կողմը** իմպերիալիստական շղթայի թույլ օղակի հարցն է։ Ելնելով իմպերիալիզմի

---

5 Նույն տեղում, հատ. 22, էջ 266—267։

6 A. Meyer, Leninism, Gambridge, Massachusetts, 1957, էջ 266։

ժամանակ կապիտալիստական երկրների անհամաչափ, թռիչքաձև զարգացման օրենքից, Լենինը գիտականորեն հիմնավորեց այն ճշմարտությունը, որ իմպերիալիզմի շղթայի ճեղքումը հնարավոր է ամենից առաջ նրա ամենաթույլ օղակում։ Ընդ որում, այդ թույլ օղակը կարող է լինել յուրաքանչյուր կապիտալիստական երկիր, անկախ նրանից, թե տնտեսապես ինչ աստիճանի է զարգացած։

Թույլ օղակը կարող է տնտեսապես թույլ չլինել։

Իմպերիալիզմի շղթայի թույլ օղակի մասին Լենինի ուսմունքը ևս խիստ աղավաղման է ենթարկվում արդի բուրժուական գաղափարախոսների կողմից։ Այսպես. Ֆետշերը, խեղաթյուրելով Լենինի մտքերը, գրում է, որ իբր կապիտալիզմի շղթայի թույլ օղակը, ըստ Լենինի, կարող է լինել միայն «ծայրագավառներում, օրինակ, կիսագաղութային հետամնաց Ռուսաստանում»։ Իսկ ինչ վերաբերում է զարգացած կապիտալիստական երկրներին, ապա թույլ օղակը նրանց չի վերաբերում։

1917 թ. այդպիսի թույլ օղակ հանդիսացավ Ռուսաստանը ոչ թե նրա համար, որ նա հետամնաց երկիր էր, այլ նրա համար, որ այստեղ ծայրաստիճանի էին հասել կապիտալիզմի բոլոր հակասությունները։

Ռուսաստանը դարձավ սոցիալական և ազգային ճնշման կենտրոնակետ, իմպերիալիզմի հակասությունների հանգուցակետ։ Հենց այդ իմաստով էլ նա հանդիսացավ նրա շղթայի թույլ օղակը։

Ինչո՞վ է բնորոշվում թույլ օղակը, որո՞նք են նրա գլխավոր հատկանիշները։ Ամենից առաջ և գլխավորապես այն բնորոշվում է տնտեսական, քաղաքական, ազգային, միջազգային և այլ հակասությունների առավել խիստ լարումով, հակասություններ, որոնք թուլացնում են կապիտալիզմի դիրքերը, սրում են սոցիալական կոնֆլիկտները։ Այս բոլորի հետևանքով խախտվում է ուժերի հավասարակշռությունը, հեղափոխական ուժերի զորությունը անհամեմատ բարձրանում է, և ռեալ հնարավորություն է ստեղծվում հեղափոխության հաղթանակի համար։

Այսպիսով, կապիտալիստական արտադրության հանրայնացման բարձր աստիճանը, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը, իրենց բոլոր հակասություններով, սոցիալիստական հեղափոխության համար ստեղծում են ռեալ նյութական նախադրյալներ։ Վ. Ի. Լենինը հանճարեղ կերպով կանխագուշակեց, որ «...կապիտալիստական արտադրությունն ինքն է առաջացրել այն նյութական պայմանները, որոնցից ինքը պետք է կործանվի։ Այսպես է պատմական պրոցեսը, և եթե այն միևնույն ժամանակ դիալեկտիկական է դուրս գալիս, այդ Մարքսի մեղքը չէ, որքան էլ որ այս ճակատագրական թվալու լինի պ. Դյուրինգին»[8]։

Սակայն պետք է ասել, որ սոցիալիստական հեղափոխության համար բավական չեն միայն նյութական նախադրյալները, օբյեկտիվ նյութական պայմանները։ Այստեղ խոշոր նշանակություն են ստանում նաև հեղափոխության սոցիալ-քաղաքական նախադրյալները, համազգային հեղափոխական ճգնաժամը։

---

[7] J. Fetscher, Von Marx zur Sowjetideologie, Frankfurt am Main, 1961, էջ 122։

[8] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 206։

Քննարկելով նոր դարաշրջանի առանձնահատկությունները, որոնց պայմաններում զարգանում էր հեղափոխական պրոցեսը Ռուսաստանում, Վ. Ի. Լենինը հարստացրեց Կ. Մարքսի գիտական մեթոդը։ Իսկ այդ մեթոդի էությունը, ինչպես Լենինն էր շեշտում, կայանում է նրանում, որ հաշվի առնվի պատմական պրոցեսի բովանդակությունը տվյալ փուլում, ճիշտ որոշվի, թե տվյալ պայմաններում ո՞ր դասակարգի շարժումն է հանդիսանում հասարակության առաջընթացի գլխավոր շարժիչ ուժը։ Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ «մարքսյան դիալեկտիկան պատմական յուրաքանչյուր ուրույն իրականության կոնկրետ վերլուծություն է պահանջում»[9]։ Խոսքը պատմական իրադրությունը ճիշտ ըմբռնելու և օգտագործելու մասին է։

Ի՞նչ է պատմական իրադրությունը։ Պատմական իրադրությունը դասակարգերի պայքարի, քաղաքական շարժումների օբյեկտիվ պայմանների բոլոր տարրերի հանրագումարն է, յուրաքանչյուր երկրի, զարգացման տվյալ փուլի պայքարի առանձնահատուկ պայմանը։

Վ. Ի. Լենինը շեշտում էր, որ առանց փոփոխված հանգամանքները հաշվի առնելու մարքսիզմը տարածել բոլոր երկրներում և բոլոր պայմաններում՝ նշանակում է ծաղրանքի ենթարկել Մարքսի պատմական մեթոդը։ Յուրաքանչյուր ճշմարտություն կվերածվի դատարկ խոսքի, եթե այն տարածվի զարգացման ամեն մի փուլի և ամեն մի երկրի վրա։ Ամեն ինչ կախված է տեղից, ժամանակից և պայմաններից։

Ղեկավարվելով մարքսիզմի այս պատմական մեթոդով, բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ կարողացան բացահայտել նոր պատմական ժամանակաշրջանի օրինաչափությունները, այդ հիման վրա կարողացան ստեղծագործաբար զարգացնել մարքսիզմի հիմնական սկզբունքները։ Այստեղ մենք կանգ կառնենք միայն մի հարցի վրա։ Խոսքը սոցիալիստական հեղափոխության նոր, լենինյան տեսության մասին է։

Մինչմոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում Մարքսն ու Էնգելսը ելնում էին այն բանից, որ սոցիալիստական հեղափոխության միաժամանակյա հաղթանակը հնարավոր է կապիտալիստական բոլոր երկրներում կամ երկրների մեծ մասում։ Այդ դրույթով էին ղեկավարվում բոլոր մարքսիստները մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Այդ դրույթից հետևում է, որ սոցիալիզմի հաղթանակը մեկ, առանձին վերցրած երկրում, անհնարին է։ Դա ճիշտ էր մինչմոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանի համար, երբ նրա զարգացումը տեղի էր ունենում վերընթաց գծով։ Այն ժամանակ սոցիալիստական հեղափոխության հաջողությունը կարող էր ապահովվել կապիտալիստական բոլոր երկրների, կամ նրանց մեծ մասի պրոլետարիատի միաժամանակյա հեղափոխական ելույթով՝ ընդդեմ կապիտալի տիրապետության։ Իմպերիալիզմի դարաշրջանում դրությունը արմատապես փոխվեց։ Այդ կապակցությամբ փոխվեց նաև Մարքսի ու Էնգելսի վերոհիշյալ դրույթը։

Վ. Ի. Լենինը, ուսումնասիրելով իմպերիալիզմը, ապացուցեց, որ կապիտալիզմի տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափության օրենքը իմպերիալիզմի պայմաններում ընդունել է առանձնապես կատաստրոֆիկ և թռիչքային բնույթ։ Ելնելով այդ օրենքից, Լենինը եկավ այն եզրակացության, որ իմպերիալիզմի ժամանակաշրջանում սոցիալիզմը չի կարող հաղ-

9 Նույն տեղում, հատ. 22, էջ 426։

թել միաժամանակ բոլոր երկրներում, որ սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է սկզբում մեկ, առանձին վերցրած երկրում կամ մի քանի երկրներում։

«Տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափությունը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կապիտալիզմի անպայման օրենքն է։ Այստեղից հետևում է, որ սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է սկզբնապես մի քանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած, կապիտալիստական երկրում»[10]։

Վ. Ի. Լենինը նկատում էր, որ հեղափոխական գործունեության մեջ չի կարելի սահմանափակվել միայն կապիտալիզմի և սոցիալիզմի միջև «թռիչք» խորիմաստ բառը դնելով և խնդիրը համարել դրանով սպառված։ Նա ուսուցանում էր, որ գլխավորն այն է, թե «թռիչքի», անցման ինչպիսի ձևեր գոյություն ունեն, թե ինչպես են այդ ձևերը որոշվում կոնկրետ պատմական պայմաններով, տվյալ իրադրության առանձնահատկություններով։ Վ. Ի. Լենինը բազմիցս մատնանշել է, որ մարքսիզմը սոցիալիզմի բոլոր պրիմիտիվ ձևերից նրանով է տարբերվում, որ շարժումները, որոնց թվում նաև սոցիալիստական հեղափոխությունը, չի կապակցում պայքարի որևէ մեկ որոշակի ձևի հետ։ Նա ընդունում է պայքարի ամենատարբեր ձևերը, որոնք իրենք իրենց են առաջանում շարժման ընթացքում[11]։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ «մարքսիզմը պահանջում է պայքարի ձևերի հարցի անպայման պատմական քննարկում։ Այդ հարցը դնել պատմական-կոնկրետ իրադրությունից դուրս՝ կնշանակի չհասկանալ դիալեկտիկական մատերիալիզմի այբուբենը»[12]։

Խոսելով հեղափոխության ձևերի մասին, Մարքսն ու Էնգելսը առավելությունը տալիս էին խաղաղ ձևին։ Վ. Ի. Լենինը, նույնպես ընդգծելով պրոլետարիատի կողմից իշխանության նվաճման խաղաղ միջոցների առավելությունը, միաժամանակ նշում էր, որ հեղափոխության այդ ձևի հնարավորությունը շատ հազվագյուտ երևույթ է պատմության մեջ։ Այնուամենայնիվ, այդպիսի հնարավորություն եղել է անցյալում և կա այժմ այս կամ այն երկրում։ Ռուսաստանում 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո մինչև հուլիսյան դեպքերը հնարավորություն էր ստեղծվել խաղաղ ճանապարհով իշխանությունը սովետներին անցնելու համար։

Բնութագրելով դասակարգային ուժերի նոր հարաբերակցությունը երկրում, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ստեղծված իրադրության մեջ բուրժուազիան չէր կարող ուժ գործադրել աշխատավոր ժողովրդի դեմ, քանի որ նա իշխանությունը իր ձեռքին էր պահում սովետների միջոցով։ Սովետները, թեև իրենց ձեռքում չունեին ոեալ իշխանություն, սակայն հենվում էին ժողովրդական մասսաների վրա։

1917 թ. հուլիսյան դեպքերից հետո իրադրությունը և դասակարգային հարաբերակցությունը երկրում փոխվեցին։ Մենշևիկներն ու էսեռները ժամանակավոր կառավարության հետ համաձայնության գալու իրենց քաղաքականությունն ավարտեցին նրանով, որ վերջնականապես անցան հակահեղափոխության կողմը։ Երկիշխանությունը վերջացավ։ Ամբողջ իշխանությունը անցավ հակահեղափոխական բուրժուազիայի ձեռքը։ Այդ պայմաններում բանվոր դա-

10 Նույն տեղում, հատ. 21, էջ 435։
11 Տե՛ս նույն տեղում, հատ. 11, էջ 255։
12 Նույն տեղում, էջ 256։

սակարգը կարող էր իշխանությունը վերցնել միայն զինված ապստամբության միջոցով։

Այսպիսով, հեղափոխության ձևի ընտրությունը կախված է կոնկրետ պայմաններից՝ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ։

Հեղափոխության առավել տարածված ձևն է զինված ապստամբությունը։ Եվ հասկանալի է, շահագործող դասակարգերը, որպես օրենք, կամավոր կերպով չեն հրաժարվում իրենց դիրքերից, իրենց իշխանությունը կամավոր կերպով չեն զիջում ուրիշ դասակարգի։

Հեղափոխության զանազան ձևերի, նրանց դիալեկտիկական զուգակցման մասին մարքս-լենինյան ուսմունքը հսկայական տեսական և քաղաքական նշանակություն ունի հեղափոխական պրոցեսի արդի պայմաններում, երբ շատ երկրների համար գոյություն ունեն նոր պայմաններ, որոնք հնարավորություն են ստեղծել սոցիալիզմին անցնելու նոր ուղիներով։ Մեր օրերում, երբ սոցիալական ուժերի հարաբերակցությունը փոխվել է հօգուտ սոցիալիզմի, սոցիալիստական հեղափոխության խաղաղ զարգացման հնարավորությունը ընդլայնվել է։ Կոմունիստական կուսակցությունները միաժամանակ գտնում են, որ որոշ իրավիճակում ժողովրդական մասսաների պայքարը սոցիալիզմին անցնելու համար կարող է զինված ապստամբության բնույթ կրել։ Միանգամայն պարզ է մի բան՝ ինչ ձևով էլ որ կատարվի անցումը կապիտալիզմից սոցիալիզմին, այն հնարավոր է միայն սոցիալիստական հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի տարբեր ձևերի միջոցով։

Սոցիալիստական հեղափոխության դիալեկտիկայի լենինյան տեսությունը շատ ցայտուն կերպով դրսևորվում է հեղափոխական իրադրության և քաղաքական ճգնաժամի վերաբերյալ Լենինի ուսմունքի մեջ։

Հեղափոխական իրադրության մասին մեր սոցիոլոգիական և քաղաքական գրականության մեջ շատ է գրվել։ Համարյա բոլոր հեղինակները, որոնք այս կամ այն առիթով անդրադարձել են այդ հարցին, Լենինին հասկանում են այն իմաստով, որ իբր հեղափոխական իրադրությունը վկայում է միայն հեղափոխության օբյեկտիվ սոցիալ-քաղաքական պայմանների առկայությունը։ Առանձին հեղինակներ պաշտպանում են մի փոքր այլ կարծիք։

Մենք միանգամայն համամիտ ենք Յու. Ա. Կրասինի հետ, որ հեղափոխական իրադրության առաջացման և զարգացման պրոցեսում դրսևորվում է օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնի դիալեկտիկական միասնությունը[13]։ Սակայն Յու. Ա. Կրասինը հետագայում հանդում է այն եզրակացության, որ այդ դիալեկտիկական միասնությունը Լենինի կողմից իբր բացահայտվում է միայն համազգային ճգնաժամ հասկացությունում և բնութագրված է որպես բոլոր մեծ հեղափոխությունների հիմնական օրենք։

Կասկածից դուրս է, իհարկե, որ հեղափոխական իրադրությունը, արտացոլելով ամենից առաջ և գլխավորապես սոցիալ-քաղաքական օբյեկտիվ պայմանների փոփոխման պրոցեսը, միաժամանակ ուղղակի առնչություն ունի հեղափոխության սուբյեկտիվ գործոնի հետ, ինչ որ չափով, կամ աստիճանով արտացոլում է այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում հեղափո-

---

13 Տե՛ս Ю. А Красин, В. И. Ленин и проблемы марксистской теории социалистической революции, Автореферат диссертации на соискание ученой степени доктора философских наук. М., 1964.

խության սուբյեկտիվ գործոնի բնագավառում։ Դրանում կարելի է համոզվել, եթե կոնկրետ քննարկենք Վ. Ի. Լենինի բացահայտած հեղափոխական իրադրության հիմնական հատկանիշները։ «Երկրորդ ինտերնացիոնալի կրախը» աշխատության մեջ նա ընդգծում էր, որ հեղափոխությունը անհնարին է առանց հեղափոխական իրադրության, չնայած նրան, որ ոչ բոլոր տեսակի հեղափոխական իրադրությունն է վերջանում հեղափոխությամբ։

Ընդհանուր առմամբ հեղափոխական իրադրությունը օբյեկտիվ սոցիալ-քաղաքական պայմանների ամբողջությունն է։ Ընդ որում, նրա օբյեկտիվությունը բացահայտվում է ոչ թե այն բանով, որ նա տնտեսական, նյութական կյանքի տարր է, այլ նրանով, որ հեղափոխական իրադրությունը, արտացոլելով հասարակության սոցիալ-քաղաքական կյանքը, կախված չէ ոչ միայն առանձին խմբերի, կուսակցությունների, այլև առանձին դասակարգերի կամքից ու գիտակցությունից։ Ըստ Վ. Ի. Լենինի բնորոշման, հեղափոխական իրադրությունը ունի երեք գլխավոր նշաններ. 1) «Վերին խավերի» ճգնաժամը. տիրապետող դասակարգերն այլևս անկարող են անփոփոխ պահպանելու իրենց տիրապետությունը և ղեկավարելու, ինչպես առաջներում։ 2) Ճնշված դասակարգերի կարիքների և թշվառությունների սովորականից ավելի սրումը («ստորին խավերի» ճգնաժամը)։ 3) Մասսաների քաղաքական ակտիվության նշանակալի բարձրացումը, «մասսաներ, որոնք «խաղաղ» դարաշրջանում հանգիստ կերպով թույլ են տալիս իրենց կողոպտել, իսկ փոթորկահույզ ժամանակներում առաջ են քաշվում, ինչպես ճգնաժամի ողջ իրադրությամբ, այնպես էլ բուն իսկ «վերին խավերի» միջոցով, ինքնուրույն պատմական ելույթի»[14]։

Եթե մենք վերցնենք հեղափոխության իրադրության երրորդ հատկանիշը՝ մասսաների քաղաքական ակտիվության նշանակալի բարձրացումը, ապա դժվար չէ հասկանալ, որ այստեղ, օբյեկտիվ պայմանների հետ զուգահեռ, մենք գործ ունենք հեղափոխության սուբյեկտիվ գործոնի մի կարևոր կողմի հետ։ Հեղափոխական իրադրության զարգացման հետ միասին ձևավորվում են հեղափոխության սուբյեկտիվ գործոնը, նրա բոլոր բաղկացուցիչ տարրերը։ Այստեղ կարևոր է շեշտել մի հանգամանք։ Ըստ Լենինի, պրոլետարիատի տրամադրության մասսայական բարձրացումը բուրժուազիայի դեմ ուղղված հեղափոխական իրադրության կարևորագույն կողմերից մեկն է։ Իսկ դա ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ գործոնի հասունության նշան է։ Վ. Ի. Լենինը գրել է, որ հաղթական հեղափոխության համար անհրաժեշտ է, որ «(1) մեզ թշնամի բոլոր դասակարգային ուժերը բավականաչափ խճճվեն, բավականաչափ ծվատեն իրար, բավականաչափ ուժասպառեն իրենց այնպիսի պայքարով, որն իրենց ուժերից վեր է. որ (2) բոլոր տատանվող, երերուն, անկայուն, միջակա տարրերը, այսինքն՝ մանր բուրժուազիան, մանրբուրժուական դեմոկրատիան, ի տարբերություն բուրժուազիայի, իրենց բավականաչափ մերկացնեն ժողովրդի առաջ, բավականաչափ խայտառակվեն իրենց պրակտիկ սնանկացմամբ. որ (3) պրոլետարիատի մեջ սկսվի ու հզորությամբ բարձրանա մասսայական տրամադրություն՝ բուրժուազիայի դեմ ուղղված ամենավճռական, անձնվիրաբար համարձակ հեղափոխական գործողություններին աջակցելու համար։ Ահա այդ ժամանակ է հեղափոխությունը հասունացած, ահա այդ ժամանակ մեր հաղթանակը, եթե մենք ճիշտ ենք հաշվի առել...

---

14 Վ. Ի. Լենին, հատ. 21, էջ 262։

բոլոր պայմանները և ճիշտ ենք ընտրել մոմենտը, մեր հաղթանակը ապահովված է»[15]։

Մեկ այլ տեղ նորից անդրադառնալով այդ հարցին, խոսելով մասսաների տրամադրության նշանակության մասին, Լենինը նշում է, որ տասնյակ միլիոնավոր մարդիկ պատվերով հեղափոխություն չեն անում, այլ անում են այն ժամանակ, երբ վրա է հասնում անելանելի կարիքը, երբ ժողովուրդն անհնարին վիճակի մեջ է ընկնում, երբ տասնյակ միլիոնավոր մարդկանց ընդհանուր գրոհը, վճռականությունը փշրում է բոլոր հին միջոցները և, իսկապես, ի վիճակի է նոր կյանք ստեղծելու։

Մեծ Հոկտեմբերի նախօրյակին (սեպտեմբերին), երբ հեղափոխական իրադրությունը Ռուսաստանում սրվում էր, Լենինը ընդգծում էր՝ ժամանակն է, որպեսզի բոլշևիկները իրենց ձեռքը վերցնեն իշխանությունը։ Նա գտնում էր, որ ժողովրդի մեջ խիստ զարգացել է տրամադրություն՝ ուղղված Կերենսկու, մենշևիկների, էսեռների, ժողովրդի բոլոր տեսակ թշնամիների դեմ։ Հենց այդ հանգամանքն է, որ թույլ կտա հեղափոխության հնարավորությունը դարձնել իրականություն։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Լենինի համար հեղափոխական իրադրություն հասկացությունը ինչ-որ չափով ընդգրկում է հեղափոխության օբյեկտիվ սոցիալ-քաղաքական պայմանների և սուբյեկտիվ գործոնի դիալեկտիկայի անհրաժեշտությունը։

Հեղափոխական պրոցեսի այդ դիալեկտիկայի անհրաժեշտությունը բոլորովին էլ չի նշանակում, թե բոլոր հեղափոխական իրադրությունները ծնում են հաղթական հեղափոխություն։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ հեղափոխությունները երբեք պատրաստի վիճակում չեն ծնվում, Յուպիտերի գլխից դուրս չեն գալիս, միանգամից չեն բռնկվում։ Նրանց միշտ նախորդում է խմորումների, ճգնաժամերի, շարժումների, հուզումների, հեղափոխության սկսվելու պրոցեսը։

Հեղափոխական իրադրությունը, վերջին հաշվով, վաղ թե ուշ տանում է դեպի համազգային քաղաքական (հեղափոխական) ճգնաժամ, որի պայմաններում հեղափոխությունը դառնում է անխուսափելի։

Համազգային հեղափոխական (քաղաքական) ճգնաժամը անխզելիորեն կապված է հեղափոխական իրադրության հետ։ Ավելին, այն հանդիսանում է վերջինիս հետագա զարգացումն ու նրա բարձրագույն աստիճանը։ Հեղափոխական իրադրությունն իր զարգացման ընթացքում անխուսափելիորեն վերաճում է համազգային հեղափոխական ճգնաժամի։ Եթե հեղափոխական իրադրությունը հեղափոխության համար ստեղծում է միայն հնարավորություն, ընդ որում ոչ բոլոր հնարավորություններն են, որ դառնում են իրականություն, քանի որ այս դեպքում մենք ոչ միշտ գործ ունենք զարգացած, վերջնականապես ձևավորված հեղափոխության սուբյեկտիվ գործոնի հետ, ապա բոլորովին այլ պատկեր ենք տեսնում համազգային հեղափոխական ճգնաժամի պայմաններում։ Այստեղ մենք գործ ունենք հեղափոխության երկու հիմնական կողմերի՝ օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնի դիալեկտիկական միասնության հետ։ Հենց այդ պատճառով էլ հեղափոխության հնարավորությունը անխուսափելիորեն վերածվում է հեղափոխության։

15 Նույն տեղում, հատ. 31, էջ 101։

Այստեղ արդեն ամեն ինչ կախված է սուբյեկտիվ գործոնի հասունությունից, հատկապես բանվոր դասակարգի վճռականությունից, նրա կազմակերպվածությունից, հեղափոխական պայքարը մինչև վերջ տանելու նրա ընդունակությունից։ Վ. Ի. Լենինը գրում էր. «Ո՛չ ստորին խավերի ճնշվելը, ո՛չ վերնախավերի կրիզիսը դեռ չեն ստեղծի հեղափոխություն,— նրանք երկրի նեխում կստեղծեն միայն,— եթե այդ երկրում չկա հեղափոխական դասակարգ, ընդունակ ճնշման պասսիվ կացությունը փոխակերպելու զայրույթի և ապըստամբության ակտիվ կացության»[16]։

Վ. Ի. Լենինն անընդհատ շեշտում էր, որ սուբյեկտիվ գործոնը կոչված է արագացնել հեղափոխության պրոցեսը, հեղափոխական անցումը հնից դեպի նորը։ «Եվ չկան պատմության այնպիսի օրենքներ,— գրում էր Լենինը,— որ նեխած ճգնաժամը չկարողանա վերածվել մի լավ տուրուդմբոցի։ Չկա՛ն այդպիսի օրենքներ։ Ամեն ինչ կախված է հանգամանքներից, գյուղացիների աղքատ մասսայից... բանվորական կուսակցության ուժից, պայմաններից, Դուշկովի և «ոլորտների» միջև եղած ընդհարումներից ու կոնֆլիկտներից և այլն, և այլն»[17]։ Տվյալ դեպքում «տուրուդմբոց» ասելով Լենինը նկատի ունի սոցիալիստական հեղափոխության զինված ապստամբության ձևը, որը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու վճռական միջոցներից է, ըստ որում համապատասխան օբյեկտիվ պայմանների առկայության դեպքում այդ խնդրի լուծման գլխավոր ուժը նա համարում է հեղափոխության սուբյեկտիվ գործոնը՝ բանվորական կուսակցության գլխավորությամբ։

Սոցիալիստական հեղափոխության դիալեկտիկայի կարևորագույն կողմերից մեկն է հեղափոխական պրոցեսում սոցիալիստական և դեմոկրատական տարրերի ճիշտ զուգորդումը։ Վ. Ի. Լենինը այդ հարցում ևս նոր խոսք ասաց մարքսիստական տեսության մեջ։ Նա ուսուցանում է, որ պրոլետարիատը կարող է իր նպատակներին հասնել, եթե իր շուրջը համախմբի բոլոր տեսակի դեմոկրատական շարժումները, որոնք այս կամ այն կերպ ուղղված են իմպերիալիզմի դեմ։ «Սոցիալիստական հեղափոխությունը,— գրում է Լենինը,— միայն և գլխավորապես հեղափոխական պրոլետարիատի պայքարը չի լինի ամեն մի երկրում իր բուրժուազիայի դեմ,— ո՛չ, նա իմպերիալիզմի կողմից ճնշված բոլոր գաղութների և երկրների, բոլոր կախյալ երկրների պայքարը կլինի միաջզգային իմպերիալիզմի դեմ»[18]։

Վ. Ի. Լենինը ելնում էր այն բանից, որ իմպերիալիստական բոլոր ուժերի մեջ պրոլետարիատը հեղափոխական պրոցեսում վճռական դեր է խաղում։ Հատկապես նա շեշտում էր, որ ամենից առաջ ճնշված, փոքրաթիվ ազգերը կարող են իրենց փրկությունը գտնել պրոլետարիատի պայքարի ճանապարհին։ «Պատմության դիալեկտիկան այնպիսին է, որ մանր ազգերը, անզոր լինելով իբրև ինքնուրույն մի գործոն՝ իմպերիալիզմի դեմ պայքարում խաղում են այն խմորիչներից մեկի... դերը, որոնք օգնում են իմպերիալիզմի դեմ թատերաբեմ հանդես գալու իսկական ուժին, այն է՝ սոցիալիստական պրոլետարիատին»[19]։

---

16 Նույն տեղում, հատ. 19, էջ 263—264։
17 Նույն տեղում, հատ. 34, էջ 476։
18 Նույն տեղում, հատ. 30, էջ 185։
19 Նույն տեղում, հատ. 22, էջ 481։

Ժամանակակից պայմաններում լրիվ իրագործվեցին Լենինի մտքերը այն մասին, որ իմպերիալիզմի դեմ պայքարը կհամախմբի իմպերիալիզմի կողմից ճնշվող բոլոր ժողովուրդներին, բոլոր խավերին, դարձնելով դրանք մի ընդհանուր հոսանք, ուղղված իմպերիալիզմի դեմ։ Այժմ համաշխարհային հեղափոխական պրոցեսի հիմնական շարժիչ ուժերն են.

ա. Սոցիալիզմ և կոմունիզմ կառուցող ժողովուրդների գիտակցական ու կազմակերպված սոցիալական գործունեությունը։

բ. Կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը, որն իր կոմունիստական ավանգարդի միջոցով գլխավորում է ժողովրդական մասսաների պայքարը մոնոպոլիստական կապիտալի իշխանության դեմ։

գ. Ճնշված ժողովուրդների և զարգացող երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։

Հեղափոխական պրոցեսի ամենագլխավոր ուժը համաշխարհային սիստեմն է և համաշխարհային բանվոր դասակարգի պայքարը սոցիալիզմի համար։ Սրա հետ միասին չի կարելի մոռանալ նաև այն հանգամանքը, որ արդի պայմաններում խիստ մեծացել է համադեմոկրատական խնդիրների ծավալը բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի մեջ, կերպարանափոխվել է դրանց բովանդակությունը։

Ներկա ժամանակաշրջանում մենք գործ ունենք համադեմոկրատական և սոցիալիստական շարժումների նոր դիալեկտիկական հարաբերակցության հետ, երբ այդ երկու շարժումները ավելի մոտ են միմյանց, երբ դեմոկրատական խնդիրների լուծումն արագացնում է սոցիալիզմի հաղթանակի գործը։ Մեծ թափ են ստացել համադեմոկրատական շարժումները, որոնց մասնակցում են բնակչության լայն խավերը։ Այդ բոլորի շնորհիվ արդեն ոչ թե իմպերիալիզմը, այլ սոցիալիզմը, հակաիմպերիալիստական ուժերն են որոշում հասարակական զարգացման գլխավոր բովանդակությունն ու գլխավոր ուղղությունը։ Հենց սրանումն է արտահայտվում հեղափոխական պրոցեսի դիալեկտիկայի կողմերից մեկը։

Այսպիսով, արդի ժամանակաշրջանի օբյեկտիվ իրադրությունը, ժողովուրդների օբյեկտիվ վիճակը կյանքի են կոչում այնպիսի ուժերի, որոնք դառնում են սոցիալիստական հեղափոխության գործոններ, արագացնում են համաշխարհային հեղափոխական պրոցեսի ընթացքը։ Սակայն սա չի նշանակում, թե բոլոր երկրներում հեղափոխական պրոցեսը զարգանում, հասունանում է միաժամանակ։ Տարբեր երկրներում բանվոր դասակարգի, մյուս հեղափոխական ուժերի գործունեության կոնկրետ պայմանները առավել բազմաղան են դարձել։ Տարբեր են նաև այն խնդիրները, որոնք լուծում են այս կամ այն կոմունիստական և բանվորական կուսակցությունները։

Լենինը ուսուցանում էր, որ միասնական ինտերնացիոնալ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է հետազոտել, ուսումնասիրել, գտնել, կռահել, ըմբռնել ազգայինն ու առանձնահատուկը, հասնել առանձնահատուկի և միասնականի դիալեկտիկական զուգորդմանը, որը ներկա պայմաններում հսկայական նշանակություն ունի հեղափոխական պրոցեսի առաջընթացի համար։